Գևորգ Էմին

Սասունցիների պարը

Սասունցի Ափո Գալուստի հիշատակին...

Դու ծանո՞թ ես Աշնակ գյուղին,
Ուր ծիրանն է հասնում ճյուղին,
Ուր կտրին չիրն է քաղցրանում,
Ուր հոտը սարն է բարձրանում,
Ուր փեշի տակ Արագածի,
Տան կտրին նստած հացի,
Ձայն են տալիս իրար հերթով
Եվ գյուղամեջ գալիս խմբով,
Աղջիկները՝ կարմիր հագած,
Տղաները՝ փուշի կապած.
Երբ զուռնան իր ձայնը գլում՝
Դափի բերնից խոսքը խլում,
Աշնակ գյուղից հյուր է կանչում
Շղարշիկին ու Աղաքչուն,
Կաթնաղբյուրին, Դավթաշենին,
Իրինդին ու Սասնաշենին,
Թե՝ հերի՞ք է հնձե՛նք, վարե՛նք,
Եկեք Սասնա պա՞րը պարենք:

... Թող Սասունն իր պարը պարի,
Բայց դու դեռ մի՛ ծափահարի.

Այլ հասկացիր, թե այս պարով՝
Մերթ Անդոկից գրոհ տալով,
Մերթ գաղթելով սար ու քարով,
Մեկ խնդալով ու տաս լալով,
Սասունը քեզ ի՛նչ է ասում...
Հեյ վա՜խ, Աշնա՛կ տեսած լաո,
Թե տեսնեիր մի օր Սասո՜ւն...

Սասնա սարեր՝ մեջ ամպերուն,
Սասնա ջրեր՝ մեջ վիհերուն,
Ամեն սարին՝ մի վանք ու բերդ,
Ամեն ջրին՝ ջաղացի հերթ,
Ամեն քարից ջո՛ւր էր գալիս,
Աչքն ո՜ւր թեքվեր՝ դո՜ւր էր գալիս.
Երկնուց իջնում էր մանանա՛...
Ի՜նչ մանանա՝ լավ մահանա՜, -
Որ Սասունցի հարս ու աղջիկ,
Դաշտ իջնեին խունջիկ-մունջիկ,
Գազպայի տեղ նա՜զ քաղեին,
Հոտաղ տղի սիրտ դաղեին.
Որ հայրական հին տան կողքին,
Անտառի մեջ, ժայռի ճեղքին,
Մի նոր քողտի՛կ ավելանար,
Մի խորոտիկ հա՛րս մայրանար,
Նոր օրորո՛ց գնար ու գար.
Բարին լինե՛ր, չարը՝ չգա՜ր...

Հեյ վա՜խ, Սասնա բանձրիկ սարեր,
Հեյ վա՜խ, Սասնա քաղցրիկ ձորեր.
Ջուռնան էսօր թե նվագեր՝
Եկող ամռան կարձագանքեր
Սասնա ամեն թուփ ու քարից.
Ու թե դհոլն էսօր թնդար,

Մինչև աշուն, դեռ անդադար,
Ամեն գիշեր ու ամեն օր
Ժեռ-ժեռ քարեր Անդոկ սարից
Ցա՛ծ կիջնեին գլոր-գլոր...

Բարին լինե՛ր, չարը չգա՛ր...
Բայց թե լինես միայն մի բուռ,
Դու սի՛րտ լինես՝ չորս կողմը՝ քա՛ր,
Չարը՝ հզոր, իսկ դու՝ տկար,
Աղո՛թք անես թե խաչհամբո՛ւյր,
Չարի ձեռքից պրծում չկա՛...

Եվ դեռ “գաթեք թոնիրն ի կախ”,
Եվ դեռ հարբած՝ փեսա, աներ,
Մինչև մերիկն ասեր “հեյ վա՛խ”,
Փեսան գոմից բերդա՛ն հաներ,
Ջուռնեն չոլում ընկած մնաց,
Դափը՝ գլոր-գլոր գնաց,
Եվ ով ողջ էր՝ սարերն ընկած,
Գերանդու տեղ բերդան գրկած,
Մեկ ապրելով, տաս մեռնելով,
Մեկ զարկելով, տաս զարկվելով,
Թողին Սասնա զմրուխտ սարեր,
Դավթի ջաղացն ու իր քարեր,
Եկան ռուսի հողը հասան,
Բայց, էստե՛ղ էլ կռիվ տեսան,
Տեսան ավեր ու կոտորած,
Եվ ի՜նչ մնաց... մի Սասնաշեն,
Մի Բազմաբերդ ու Դավթաշեն,
Մի Կաթնաղբյուր ու Աղաքչի,
Մի խեղճ Իրինդ ու Շղարշիկ
Եվ մի Աշնակ՝ չոլում կորա՜ծ...

Հեյ վա՜խ, Մշո սրսո՛ւռ հողեր,
Դե՛, քա՛ր մաղի, որ հո՜ղ դառնա.
Հեյ վա՜խ, Սասնա զուլա՛լ ջրեր,
Դե՛, ձյո՛ւն հալի, որ ջո՜ւր դառնա.
Հե՜յ Աշնակա չոլ ու ղռեր՝
Աշնակն ինչպե՞ս Սասուն դառնա...

Եկան, դրին քարը քարին՝
Դուշմանն եկավ խառնեց իրար.
Ողջ ու մեռել ջոկ-ջոկ արին՝
Դուշմանն եկավ խառնեց իրար.
Մինչև արյունը թանձրացավ,
Կարմիր գույնի դրոշ դարձավ,
Մինչև մանգաղն ելավ հողից,
Մուրճը պոկվեց սալի կողքից,
Ու երկուսն էլ, եղբոր նման,
Այդ դրոշի վրա ելան
Ու նոր արև ծագեց հողին,
Հող վարողին, հող սիրողին:

Մինչև նորից օջախ դրին՝
Ծուխը սողաց.
Մինչև նորից տաք թոնիրին
Բոցը շողաց.
Մինչև նորից, խունջիկ-մունջիկ,
Դաշտ գնացին հարս ու աղջիկ,
Որ աղցան ու սիբեխ քաղեն,
Հոտաղ տղի սիրտը դաղեն,
Հոր արտի մոտ նոր արտ վարեն,
Արթիկ տուֆից նոր պատ շարեն,
Մի նորելուկ հա՛րս մայրանա,
Մի նոր թոնրի ծո՛ւխ բարձրանա,
Նոր օրորո՛ց գնա ու գա,

Բարին՝ տևի՛, չարը չգա՛...

...Եվ երբ տեսան, էլ չարորդին մոտ չի՛ գալիս,
Եվ երբ տեսան՝ էլ վառոդի հոտ չի՛ գալիս,
Եվ երբ տեսան՝
Էլ չի՛ թափվում հողին արյուն,
Եվ երբ տեսան՝
Եկավ աշուն, եկավ գարուն,
Առանց ահի, կոտորածի,
Բա՛ց արեցին սուփրեն հացի,
Զուռնեն խոսե՛ց բերանացի
Եվ Արագած լեռան գոգին
Զարթնե՛ց կրկին Սասնա ոգին...

Եվ Սասունը նորի՛ց պարեց,
Ոտքը զարկեց, ձեռքով արեց,
Եվ նույն զուռնան, որ հնչում էր հին տան բակում,
Հնչեց հիմա ամեն գյուղում ու քաղաքում.
Իսկ դհոլը, որ քարե՛ր էր պոկում սարից՝
Ծափե՛ր պոկեց ամեն ազգից ու աշխարհից...

Պարե՛ց Սասունն, ու ողջ աշխարհը հիացավ,
Պարե՛ց Սասունն, ու ողծ աշխարհը հասկացավ,
Որ երբ նազում են աղջիկներն ու կռանում՝
Սասնա ձորից ջուր են բերում, արտ քաղհանում.
Երբ ոտքի տակ տղաների հո՛ղն է թնդում՝
Հոտաղները Սասնա սարում գա՛յլ են խեղդում.
Երբ խռնվում՝ կարծես ամպրոպ պայթի սարում՝
Այդ ոսո՛խն է նրանց գյուղերը պաշարում.
Երբ միանում՝ բերդ են դառնում շինված քարից՝
Այդ ոսոխին ե՛տ են քշում Անդոկ սարից.
Իսկ երբ ձեռքը ձեռքին զարկում, ծա՛փ են տալիս՝
Մահվան վիհից դեպի կյանքի ա՛փ են գալիս...

Պարե՛ց Սասունն, ու ողջ աշխարհը հիացավ,
Պարե՛ց Սասունն, ու ողջ աշխարհը հասկացավ,
Որ պար չէ սա, այլ՝ մի ազգի քաջ պատմություն,
Ուր պարտությո՛ւնն անգամ ունի հպարտություն,
Եվ չի՛ հաղթի ոչինչ այն հին ժողովրդին,
Որ այս ջանքո՛վ
Ու այս կամքո՛վ
Պարե՛լ գիտի...

Հասկացան ու ասին ի լուր ողջ աշխարհի,
- Հալա՛լ է քեզ,
Սասո՛ւն, պարի՛...

Պարի՛,
Դու դեռ երա՛զ ունես կատարելու,
Վրե՛ժ ունես պատմությունից դեռ հանելու.

Պարի՛,
Գազպան դեռ քո ձեռքի՛ն է կարոտում,
Սասնա հողը վար ու հերկի՛ է կարոտում.
Պարի՛,
Մինչև ողջ հայերին դու ամբարե՛ս,
Եվ այս պարը
ՄԱՍԻՍ ԼԵՌԱՆ ԼԱՆՋԻ՛Ն ՊԱՐԵՍ...

1957